«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

ԱՌԱՐԿԱ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3 էջ

Հետազոտական համատեքստ 14 էջ

Եզրակացություն 2 էջ

Գրականության ցանկ 1 էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- **Թեմայի դասավանդման անհրաժեշտությունը.**

Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած հայոց ցեղասպանությունը և նրա հետևանքները հայ ինքնության և հիշողության համար ազգային ողբերգության, կորստի, բայց նաև մաքառման, ազգային վերածննդի ու կյանքի շարունակականության անբեկանելի բաղադրիչներն են դարձել: Ցեղասպանության թեմայի ուսուցումը խիստ կարևոր է ՀՀ, ԼՂՀ և սփյուռքահայ մանուկներին Հայոց ցեղասպանության մասին ընդհանուր գիտելիքներ հաղորդելու, համապարփակ ու խորքային պատկերացումներ տալու տեսանկյունից: Հոլոքոստի և մյուս ցեղասպանությունների ուսուցումը կարևոր տեղ է զբաղեցնում թանգարանային և դպրոցական կրթության բնագավառներում և տարաբնույթ կրթադաստիարակչական նախաձեռնություններում:

Հայ իրականության մեջ ցեղասպանության կրթության նշանակությունը կարևոր է մի քանի առումներով. նախ այն պետք է նպաստի տեղի ունեցած ողբերգության մասին համապարփակ ու խորքային գիտելիքների մատուցմանը, սերունդների կրած տառապանքի հանդեպ հարգանքի դրսևորման և մեր պետականության նկատմամբ պատասխանատվության և օրինապաշտության գիտակցության ամրապնդման համար: Ցեղասպանության թեմայի ուսուցումը կարևոր է նաև պատմական արդարության վերականգնման ու ցեղասպանության հետևանքների վերացման անհրաժեշտության գիտակցումը հաջորդ սերունդներին փոխանցելու տեսանկյունից:

- **Թեմայի արդիականությունը.**

Թուրքիայի կողմից շուրջ մեկ դար շարունակվում է Հայոց ցեղասպանության փաստի ժխտումը, որի «ակադեմիական» հենքն ապահովելու համար միտումնավոր շրջանցվում է արդարության, գիտական անաչառության ու անկողմնակալության սկզբունքը: Ժխտողական քաղաքականությունն իրականացվում է երկու հիմնական ուղղություններով՝ արտաքին քաղաքականության և ակադեմիական շրջանակների միջոցով, որոնք անմիջականորեն ֆինանսավորվում են կառավարության կողմից:

Այսօրվա Թուրքիան Հայոց ցեղասպանության և քրիստոնյա բնակչության՝ ծրագրված բնաջնջման արդյունքն է:

Նման պայմաններում ստեղծվեց հանրապետական Թուրքիան և այստեղ է թաքնված թուրքական պետականության հիմքի գաղտնագիրը, որը թուրքական իշխանությունները վախենում են գաղտնազերծել: Թուրքիայի հիմնադիր հայրերն

ուղղակիորեն ներգրավված են եղել Հայոց ցեղասպանության ծրագրման, իրականացման և արդյունքներից օգտվելու մեջ: Եվ այսօր դժվար է պատկերացնել, որ դեռևս ոչ ժողովրդավար Թուրքիան ուժ կգտնի իր մեջ, որպեսզի վերանայի և վերաշարադրի սեփական պատմությունը և նոր հայացք նետի սեփական պատմության և հիշողության, անցյալի մութ և սև էջերի վրա:

Հայկական կողմը ևս որևէ պարագայում և ոչ մի պայմանով չպետք է հրաժարվի ոչ միայն բարոյական, այլ նաև նյութական, հոգեբանական և այլ կարգի վնասների փոխհատուցման պահանջներից: Այսօր Թուրքիայի Հանրապետությունը, որը ցեղասպանություն իրագործած Օսմանյան կայսրության իրավահաջորդն է, շարունակաբար հանդես է գալիս ուժի դիրքերից Հայաստանի Հանրապետության և ընդհանրապես հայության հետ քաղաքականություն իրականացնելիս: Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և ցեղասպանության հետևանքների վերացման հիմնախնդիրն ուղղակիորեն առնչվում է ՀՀ և Սյունիքի անվտանգության ապահովմանը:

1. Հայկ Դեմոյան – ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ-Ցեղասպանության հանդես N1. Երևան 2014

● **Խնդիրները .**

Այդուհանդերձ թեմայի շուրջ տակավին գոյություն ունեն չուսումնասիրված ոլորտներ և ուղղություններ, որոնք դեռ սպասում են իրենց հետազոտողին: Տակավին բաց է մնում ցեղասպանության հոգեբանական դրդապատճառների ու հետևանքների ուսումնասիրությունը:

Այս համատեքստում կարևոր եմ համարում մասնագետների պատմական հարցը և գիտական սերնդափոխության ապահովման անհարժեշտությունը: Այսօր արդեն հրատապ խնդիր է ՀՀ բուհական համակարգում մասնագիտական ամբիոնների ստեղծումը, որտեղ հնարավոր կլինի պատրաստել ցեղասպանագետների, օսմանագետների և այս ոլորտին առնչվող այլ մասնագետներ: Վերջին տարիների ընթացքում Հայոց ցեղասպանության թեմայով հրատարակվել են տասնյակ հատորներ:

Ցանկալի է այս կարգի աշխատանքների շուրջ մշակել հատուկ հայեցակարգ և մոտեցումներ՝ ռեսուրսների ավելորդ վատնումից խուսափելու համար:

Ասեմ ավելին, Հայոց ցեղասպանության թեմայի հանգամանալից դասավանդումը, գիտական մակարդակով ուսումնասիրումը պետք է սկսել դպրոցից, հիմնական

դպրոցի 9-րդ դասարանում այս թեմային հատկացված 1-2 ժամը ավելացնել և ավելի գործնական պարապմունքներով (այցելություններ ցեղասպանության թանգարան՝ ցուցադրություններ դիտելու, դասախոսություններ լսելու, հուշարձան-համալիր այցելություն) գիտելիք տալ:

«Հայոց ցեղասպանության թեման դպրոցներում պետք է դասավանդել նույնիսկ տարրական դպրոցից: Դասավանդել ոչ թե լացի, ողբի, զոհի կարգավիճակից, խոսել միայն ցեղասպանության հուշերի մասին, այլև կրթել գրագետ սերունդ, որը պահանջատեր կլինի Հայոց ցեղասպանության ճանաչման գործում»:

Անցյալի դեպքերն ու երևույթները կամրջել ներկայի հետ, անցյալը դարձնել այսօրվա իրականության մեջ շարունակվող ազդակ և որոշիչ տարր ներկայի ու ապագայի զարգացումների ոլորտում: Ուրեմն՝ պատմական դեպքը քննարկելիս, աշակերտին մղել քննարկելու ո՛չ թե որպես մեռած անցյալ, այլ մեկ մասը իր առօրյայի, այլ խոսքով, աշակերտին մղել ինքն իրեն դերակատար տեսնելու տվյալ իրադրության մեջ և ըստ այնմ դատելու, որոշում կայացնելու կամ եզրակացության հանգելու:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է 3 գլուխներից.

Գլուխ 1 Ա. - Ցեղասպանությունը երեկ և այսօր:

Գլուխ 1 Բ. - Ցեղասպանական միջավայրի ձևավորումը օսմանյան կայսրությունում:

Գլուխ 1 Գ. - Պոլիտիցիդը Հայոց ցեղասպանության համատեքստում:

Գլուխ 2 Ա. - Ոչ զինված դիմադրությունը Հայոց ցեղասպանության ժամանակ:

Գլուխ 2 Բ. – Մուրացկանություն:

Գլուխ 3 Ա. - Հայոց ցեղասպանության թեմայի զարգացման միտումները «ԱԿՕՍ» շաբաթաթերթի էջերում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007 թթ.):

Գլուխ 3 Բ. - Հայոց ցեղասպանության ժխտման պատմությունից:

1-ին գլուխը բաղկացած է Ա, Բ, Գ ենթագլուծներից:

2-րդ գլուխը բաղկացած է Ա, Բ ենթագլուխներից:

3-րդ գլուխը բաղկացած է Ա, Բ ենթագլուխներից:

ԳԼՈՒԽ 1 Ա.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

Այսօր աշխարհի տարբեր անկյուններում մոլեգնող զանգվածային բռնություններն ու ահաբեկչությունները, տարբեր երկրներում իշխանության գլուխ կանգնած ռազմամոլ ու հավակնոտ առաջնորդների ագրեսիվ հռետորաբանությունն այն ահազանգերն են,

որոնք անուշադրության չպետք է մատնել: Հայերը, հրեաները, թութսիներն ու բոսնիացիները չեն կարող միայնակ մնալ իրենց ցավի ու հիշողության հետ: Դա համայն մարդկության՝ տեղի ունեցած ողբերգության հետևանքներին առերեսվելու ցավն է ու օրակարգային խնդիրը:

Ցեղասպանությունը պատմական հասկացություն չէ: Այն չի սահմանափակվում տարածության ու ժամանակի մեջ, քանզի իր ծանրությամբ ու հետևանքներով համամարդկային միջամտության, կանխարգելման ու իմաստավորման է պարտադրում մեզ բոլորիս:

Հոգեբանորեն ծանր է ուսումնասիրել ցեղասպանություն երևույթը: Այդուհանդերձ, նրանք, ովքեր ցեղասպանագիտությունը որպես մասնագիտություն են ընտրել, կայացրել են ճակատագրական որոշում. սա նշանակում է ապրել մեկ ուրիշի, հարյուրների, հազարների ու միլիոնների պատուհասած ցավով ու ողբերգությամբ, մտովի կիսել երբեմն նույնիսկ անհնար թվացող և մարդկային բանականության սահմաններում չտեղավորվող ցավն ու տառապանքը:

Հենց այս ծիրում են միահյուսվում ակադեմիական խստությունն ու գիտականությունը, բարոյականն ու մարդկայինը՝ դառնալով հավատամք ու համոզմունք իսկական գիտնականի համար:

Շուրջ հարյուր տարի է անցել XX դարի առաջին ցեղասպանությունից Օսմանյան կայսրությունում իրականացված Մեծ եղեռնից: Չնայած այդ ոճրագործության սկիզբը հաճախ համարում են 1915թ., սակայն կայսրությունում տիրող իրավիճակը, գաղափարական հոսանքների նոր միտումները, մասնավորապես պանթուրքիզմը, ի հայտ են եկել շատ ավելի վաղ՝ Առաջին համաշխարհային պատերազմից էլ առաջ: Օսմանյան կայսրության իշխող շրջանակների գաղափարախոսությունը, որի նպատակն էր ստեղծել «Մեծ Թուրան»՝ պետություն, որը պետք է միավորեր բոլոր թուրքալեզու ժողովուրդներին օսմանների հովանու ներքո, ի վերջո հանգեցրեց կայսրությունում բնակվող հայերի և այլ քրիստոնյա ժողովուրդների ցեղասպանությանը:

Մեսիանական այն գաղափարները, ըստ որոնց թուրքերը գերակայություն ունեին մյուս ազգերի նկատմամբ, մեր օրերում նույնպես, պահպանվել են, իսկ հայերի դեմ իրագործված հանցագործությունը մինչ օրս դեռ շարունակվում են ժխտել վերջինիս կազմակերպիչների ու իրականացնողների ժառանգները:

Հայոց ցեղասպանությունն ունի հայերի նկատմամբ իրականացված հետապնդումներով և կոտորածներով հարուստ նախապատմություն, որը չի սահմանափակվում միայն 1890-ական թթ. կոտորածներով: Այս առումով հետազոտողները քիչ ուշադրություն են դարձրել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում տեղի ունեցած մարտական գործողություններին ուղեկցող անցքերին: Դա պայմանավորված էր Բալկանյան ճակատի առաջնակարգ կարևորությամբ, մյուս կողմից այդ նույն ժամանակահատվածում, ինչպես նաև դրանից մեկ-երկու տարի առաջ տեղի ունեցած բուլղարական դեպքերի արձագանքները կարծես թե «ստվերել» էին Կովկասյան չակատի դեպքերը:

Այս հոդվածում քննարկվում են վերոհիշյալ պատերազմի Կովկասյան ճակատում ռազմական գործողություններին զուգահեռ տեղի ունեցած իրադարձությունները՝ որպես օսմանյան «քարոզչամեքենայի նյութ»: Հետազոտությունը չի ներառում թուրքական մամուլը, քանի դա լինոլով նաև որոշակիորեն ուսումնասիրված դուրս է հոդվածի հետազոտական խնդիրներից: Ուստի մեր առջև խնդիր ենք դրել ա) օսմանյան քարոզչական երկու հրատարակությունների օրինակով ներկայացնել թուրքական պաշտոնական տեսակետը նշված իրադարձությունների վերաբերյալ՝ զուգահեռ վերհանել առավել կարևոր անցքերը, բ) առանձնացնել իրադարձությունների գնահատման և ներկայացման տվյալ ժամանակի օսմանյան սկզբունքներն ու մեթոդները:

ԳԼՈՒԽ 1 Բ.

ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցանկացած ցեղասպանության իրականացման համար չափազանց կարևոր նախապայման է բնակչության մեծ զանգվածների ներգրավումը սպանության

գործընթացում: Հայոց ցեղասպանության կազմակերպիչները դեռևս մինչև Առաջին աշխարհամարտը քայլեր ձեռնարկեցին Օսմանյան կայսրության հարյուր հազարավոր մուսուլմանների հավաքագրումը հայերին ոչնչացնելու գործընթացի մեջ ապահովելու ուղղությամբ:

Այս պարագայում վճռական նշանակություն էր ձեռք բերում ցեղասպանական միջավայրի ձևավորումը: Այս ամբողջ գործընթացը տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումից քիչ անց, երբ նոր իրավիճակը թույլ տվեց ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հասարակությանն առավել ընկալունակ դարձրին ատելության գաղափարների տարածման նկատմամբ: Իր հերթին հայ բնակչությունը, տրվելով երիտթուրքերի կարգախոսներին, կորցրեց զգոնությունը և անպատրաստ գտնվեց գալիք արհավիրքին դիմագրավելու համար: Առաջին աշխարհամարտը հարմար առիթ ընձեռեց այս ամբողջ գործընթացը բյուրեղացնելու համար: Իթթիհադական կուսակցության վերնախավը, օգտագործելով պետական ամբողջ ռեսուրսները՝ նյութական, կազմակերպչական, ուժային և քարոզչական, ներգրավեց այս «նախագծի» մեջ կայսրության գրեթե ամբողջ մուսուլմանական բնակչությանը:

Մեր կողմից փորձ է արվել կառուցվածքային վերլուծության ենթարկել Օսմանյան կայսրությունում ձևավորված ցեղասպանական միջավայրը, առանձնացնելու դրա բաղադրիչները: Այս փուլերի բաժանումը, իհարկե, խիստ պայմանական բնույթ ունի: Յուրաքանչյուր փուլ կարող է համընկնել և փոխլրացնել մեկ այլ, կամ մի քանի այլ փուլերի հետ, որոշ փուլերը երբեք հանդես չեն գալիս «մաքուր» տեսքով, սակայն կարծում ենք, որ առանձնացման այս փորձը հնարավորություն է ընձեռում ավելի ամբողջական հասկանալու հակահայկականության ձևավորման և այն ցեղասպանական բնույթի վերածելու ամբողջ խորքային գործընթացները, որոնք ընթանում էին օսմանյան հասարակությունում Հայոց ցեղասպանության նախօրեին:

ԳԼՈՒԽ 1 Գ.

ՊՈԼԻՏԻՑԻԴԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Պոլիտիցիդ կամ քաղաքական սպանություն՝ եզրով է ցեղասպանության մեջ սահմանվում ցեղասպանության զոհ հանդիսացող ազգի կամ ժողովրդի քաղաքական, հասարակական, ռազմական և մշակութային գործիչների կանխամտածված և զանգվածային ոչնչացումը ցեղասպանությունն իրականացված դահճի կողմից:

Նպատակը մեկն է՝ ցեղասպանության իրագործումից առաջ կամ ընթացքում զրկել տվյալ էթնոսին՝ ինքնապաշտպանության կազմակերպումն ստանձնելու կարող ուժից:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի բնորոշմամբ. «Քաղաքական սպանության նպատակն է գլխատել ցեղասպանության ենթակա ազգին և կոտրել նրա դիմադրողական ոգին, որը գործողությունների աղատության լայն դաշտ է ստեղծում ցեղասպանությունը կիրառող պետությունների և կառավարությունների համար՝ զանգվածային սպանդ կազմակերպելու առումով»:

Հայոց ցեղասպանության դեպքում պոլիտիցիդի կամ քաղաքական սպանության մեկնարկը տրվեց 1915 թ. փետրվարին, երբ երիտթուրքական կառավարության հրահանգով բանակ զորակոչվեցին զենք կրելու ունակ շուրջ 60 հազար հայ տղամարդիկ: Դա ձևական զորահավաք էր, քանի որ հայ զինվորներից կազմվեցին բանվորական գումարտակներ, և նրանց ստիպեցին փորել սեփական գերեզմանները: Այդպիսով, հայ բնակչությունը զրկվեց մարտունակ ուժից:

Քաղաքական սպանության հաջորդ փուլը հայ մտավորականների՝ քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների զանգվածային բնաջնջումն էր, որի սկիզբը դրվեց 1915 թ. ապրիլի 24-ին:

Հայոց ցեղասպանության դեպքում պոլիտիցիդի մեկնարկը տրվեց 1915 թ. ապրիլի 24-ին, երբ սկսվեց հայ քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների զանգվածային բնաջնջումը: Հայ գործիչները մեծ ներդրում են ունեցել Թուրքիայի գիտության և մշակույթի մեջ: Հայոց ցեղասպանության ընթացքում զոհված նշանավոր հայ գործիչներից շատերը նախքան մահն ափսոսանք էին հայտնում թուրքերին իրենց մատուցած ծառայությունների համար:

Կոստանդնուպոլսի (Ստամբուլի) հայերի նկատմամբ պոլիտիցիդը շարունակվում է նաև ժամանակակից Թուրքիայում: Ինչպես «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի սպանությունը 2007 թ. հունվարի 19-ին, այնպես էլ հայ լեզվաբան Սևան Նշանյանի բանտարկությունն անհրաժեշտ է դիտարկել որպես քաղաքական

հաշվեհարդարի մասնավոր դեպքեր:

Հայոց ցեղասպանության ընթացքում թուրքական իշխանությունների կողմից գործի դրված պոլիտիցիդի հիմնական արդյունքը դարձավ Թուրքիայի քաղաքացի հայերի հիմնական զանգվածի ապաքաղաքականացումը:

ԳԼՈՒԽ 2 Ա.

ՈՉ ԶԻՆՎԱԾ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1948 թ. դեկտեմբերի 9-ին Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայի ընդունած «Ցեղասպանության հանցագործության կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածի կետերից մեկի համաձայն՝ որևէ խմբի կյանքի համար միտումնավոր այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը՝ կատարված ազգային էթնիկական, ցեղային կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ, ցեղասպանություն է:

Հայոց ցեղասպանության ժամանակ կյանքի համար անբարենպաստ պայմանների ստեղծման գործիքներից մեկը հարյուրավոր և հազարավոր մարդկանց սովամահության դատապարտելն էր ինչպես բռնագաղթի ճանապարհին, այնպես էլ համակենտրոնացման ճամբարներում: Սովամահությունը դիտարկելով որպես ցեղասպանության իրագործման քաղաքականություն՝ Ջորջ Շիրինյանը մատնանշում է նման քաղաքականության շարժառիթը. «Վերջապես մենք ուսումնասիրեցինք թուրքերի կողմից սովամահությունը՝ որպես ցեղասպանության գործիք կիրառելու շարժառիթները՝ բացահայտելով, որ այն մասամբ արդարացնում է իրենց այն պատճառաբանությունը, որ հայերը բնական մահով են մահացել, բայց և պատժելու դանդաղ, հոգեվարքային մահով՝ վրեժխնդրության և հայերի նկատմամբ տիրապետություն հաստատելու համար, քանի որ նրանք հրաժարվեցին օսմանյան սոցիալական և քաղաքական համակարգում մնալ ստորադաս դիրքում»:

Ստորև ներկայացվում է, թե հայերը ինչ միջոցների են դիմել բռնագաղթի ճանապարհին կամ համակենտրոնացման ճամբարներում՝ սնունդ ձեռք բերելու համար՝ անդրադառնալով հատկապես երեխաների փորձառություններին: Սննդի ձեռքբերումը և ֆիզիկական գոյության պահպանումը դիմադրություն էին Հայոց ցեղասպանությանը և խոչընդոտ՝ ոճրագործների վերջնական նպատակին հասնելու համար: __ 9 __

Հայոց ցեղասպանության ժամանակ երեխաներն անցնում էին բազմաթիվ փորձությունների միջով՝ հաճախ նաև միայնակ թափառելով մի բնակավայրից մյուսը, անցնելով մուսուլմանական ընտանիքներով, տարբեր «տերերի ձեռքի տակով», ճարպկություն և խորամանկություն դրսևորելով՝ գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար պայքար մղում՝ ողջ մնալու համար:

Հայոց ցեղասպանությունը վերապրողների հուշագրությունները, ինչպես նաև բանահավաքների գրառած բանավոր պատմությունները, որպես կանոն, սկսվում են խաղաղ կյանքի մասին նկարագրություններով: Ուշագրավ է, որ գաղթի ճանապարհի մասին պատմելիս վերապրողները հաճախ հղում են կատարում «երջանիկ մանկությունը»՝ որպես մի ժամանակահատվածի, որը «մնացել էր ետևում» կամ ավարտված էր: Երեխաները, կորցնելով երջանիկ մանկությունը, կանգնել էին նոր մարտահրավերների առաջ: Անթուրայի թուրքական որբանոցի հնգամյա սան Գառնիկ Բանյանն իր հայերի օջախը հիշատակում է որպես աղոթատեղի, իսկ այգին՝ որպես դրախտավայր. «*Մեր տունը աղօթքի տաճար էր, տարուան չորս եղանակներուն էլ աղօթքի մրմունջներ կը լսուէին*»: Բռնելով գաղթի ճանապարհը՝ հասկացել էր, որ աշխարհն ավելի ընդարձակ է. «*Կը հեռանայինք, բայց յանկարծ, մտքով կը դառնայի մեր քաղաքը, մեր տունը, մեր տան տաքուկ շունչը, մեր տան թարմ հացը, մեր պարտեզի համով պտուղները, մեր սաքուին վրայ շուք ընող ծառերը, իրենց մեջէն սահող-անցնող զով հոսանքը օդի ... Անոնք ամենքը մնացեր էին մեր ետևը...*»:

Հետևում թողնելով երջանիկ մանկությունը՝ երեխաները կարծես ժամանակից շուտ հասունանում էին՝ երբեմն ստանձնելով նաև «տան գլխավորի» դերը: Նրանք ընդգրկվում էին որոշումներ կայացնելու և ապրուստի միջոցներ հայթայթելու պարտականությունների մեջ, երբեմն էլ միայնակ հոգ տանում ընտանիքի անդամների մասին: Ընդ որում նրանք իրենց վրա էին վերցնում այս գործառույթները բռնագաղթի հենց սկզբից: Վերապրողներն իրենք բացատրում են սա նրանով, որ երեխաներից ամենամեծն էին կամ եթե նույնիսկ ամենամեծը չէին, այնուամենայնիվ իրենք իրենց ընկալում էին արդեն «հասուն մարդ»: 1902 թ. Կեսարիայում ծնված Նիկոլաս Բերբերյանը պատմում է. «*Նրանք ասացին, որ յոթ օրից պետք է դուրս գնաք (բնակավայրից): Հետևաբար մենք մեր իրերը դրեցինք կառքի վրա և ամբողջ ընտանիքով դուրս եկանք: Հայրս հեռացել էր, ուստի ընտանիքի գլխավորը ես էի, ես ամենամեծն էի*»:

Հայ երեխաները ոչ միայն ստանձնում էին աքսորի նախապատրաստական աշխատանքները, այլև արդեն իսկ բռնագաղթի ճանապարհին՝ մեծահասակներին մխիթարելու և հուսադրելու գործը: Վերապրող Աշխեն Պողիկյանը պատմում է 1915 թ. աշնանը Տիգրանակերտում իրենց քարավանի հետ տեղի ունեցածի մասին. «*Հաջորդ օրը Լևոնիկը մեռավ: Ես մնացի մենակ մայրիկիս հետ: Արդեն ութ տարեկան էի և մխիթարում ու հանգստացնում էի մայրիկիս*»:

ԳԼՈՒԽ 2 Բ.

ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սնունդ ձեռք բերելու մյուս ձևը, որին դիմում էին հայ գաղթականները ոչ միայն աքսորի ճանապարհին գյուղերի ու գյուղաքաղաքների միջով անցնելիս, այլևս արաբական բնակավայրերում, մուրացկանությունն էր, որը -ատ տարածված էր նաև երեխաների շրջանում:

Խարբերդում ԱՄՆ-ի դեսպան Լեսլի Դևիսը գրում է. «*Տարբեր ժամանակ բազմաթիվ երեխաներ էլ էի գտել հյուպատոսարանում պատսպարել՝ չհաշված նրանց, ովքեր մայրերի հետ էին ինձ մոտ ապրում: Առաջինը, ում ապաստան տվեցի՝ Ներսես Տեր-Կարապետյանն էր, ինը տարեկան մի տղա… Հետո հորը, մորը, բոլոր քույրերին ու եղբայրներին կոտորել էին, ինքը մնացել, շուկայի հրապարակում մուրացկանություն էր անում*»:

Քեսաբցի Զարուհի Այանյանը, ով Հայոց ցեղասպանության ժամանակ վեց տարեկան էր, պատմում է, որ տեղահանվելիս իրենց հետ ունեցել են կով, որը ճանապարհին մայրը կթել է: Գաղթել են Բազուր գյուղ, որտեղ վաճառել են կովը, ապա հասել են Համա, Հոմս, այնտեղից՝ Դամասկոսի մոտ գտնվող Նեբիկ բնակավայրը: Այստեղ մնալով մեկ տարի՝ մոր հետ մուրացկանություն են արել՝ ապրելու համար: Այստեղ մնալով մեկ տարի՝ մոր հետ մուրացկանություն են արել՝ ապրելու համար: Արդեն հիշատակված Աբրահամ Աղբաշյանը, ով պատմում էր խատուտիկներով սնվելու մասին, շարունակում է. «*Ես կովի պես մեծ ստամոքս ունեի, որովհետև միայն վայրի խատուտիկներով էինք սնվում: Ժամանակ առ ժամանակ, ես հիշում եմ, թե ինչպես էինք մայրիկիս հետ տնից տուն գնում սնունդ մուրալու*»: Բալուում ծնված տասնամյա Գառնիկ Արփաջյանը Հալեպում մնում է երկու տարի՝ մինչև անգլիացիների մուտք գործելը:

Այստեղ երկու որբ երեխաների հետ մուրացկանություն են արել՝ գոյատևելու համար. «*Ես այլևս չէի վախենում ոչնչից, ամենավատը, որ նրանք կարող էին անել, ինձ սպանելն էր: Ես սա միշտ պահում էի իմ մտքում: Ես միշտ մտածում էի վաղը այլ օր է, մյուս օրը ուրիշ, այդպես ես չէի մտածում, այս այն էր, ինչ ես զգում էի: Ես քաղցած եմ, ես սովամահ եմ լինում, ես մուրում եմ այստեղ և այնտեղ, երկու շաբաթ ես մուրացի, մուրացի, ես ուտում էի խնձորի միջուկները, ես ուտում էի տանձի*

միջուկները, ես ուտում էի ձմերուկի կեղևները, ես ուտում էի սեխի կեղևները, ես ուտում էի ամեն անիծված բան, որ կարելի էր ուտել, դրանք ուտելու չէին, բայց ես ստիպված էի ուտել»:

1901 թ. Բալուի Հավավ գյուղում ծնված Սուրեն Փափազյանն իր ունեցած փորձառության մասին գրում է. «*1917 թ. ձմեռը միս-մինակ Փերի հասայ: Մեկը չէի ճանչնար, շուկան, փողոցները դարձայ, տեսայ, որ իմ տարիքիս, ինձմէ պզտիկ խլեակ մը հայ որբեր ամբողջ օրը կը մուրան, գիշերն ալ կառավարական ձիերու ախոռը կ'երթան, կը քնանան: Իրենց միացայ, փլփլված անկիւն մը գտայ, ծուարեցայ: Ամէն մէկը ինչ որ մուրացած էր, հանեց, սկսաւ ուտել: Ես ամբողջ օրը անօթի էի, անօթի ալ քնացայ*»:

ԳԼՈՒԽ 3 Ա.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ «ԱԿՕՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ԽՄԲԱԳՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1996-2007 ԹԹ.)

Հայոց ցեղասպանության թեման Թուրքիայում երկար տարիներ տաբու էր Քննվող թեմայի շուրջ առաջին քիչ թե շատ լայն անդրադարձը սկսում է նկատվել միայն 1965

թ., երբ ՀԽՍՀ-ում և Սփյուռքում ցեղասպանության 50-ամյակի միջոցառումների մասին լուրերը և քննադատությունները տեղ են գտնում թուրքական մամուլում: Այս ընթացքում ձևավորվում էին ստի և կեղծիքի վրա հիմնված թուրքական պաշտոնական թեզերը, և իրար հաջորդող իշխանությունները որդեգրում ու հետևում էին դրանց, միևնույն ժամանակ Հայոց ցեղասպանության վերաբերյալ այլընտրանքային կարծիքները խստիվ արգելվում էին և՛ մամուլում, և՛ գիտական ու գեղարվեստական գրականության մեջ, այդ թվում՝ պոլսահայ մամուլում: Իսկ քաղաքական կյանքում գերիշխում էին բացառապես պետական տեսակետները՝ ներկայացնելով այսպես կոչված «Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը»: Հայոց ցեղասպանություն եզրույթը ևս վերածվում է տաբուի և մամուլում կիրառվում է կա՛մ չակերտներով, կա՛մ «այսպես կոչված» բառակապակցության ուղեկցությամբ:

Հարկ է նշել, որ ավելի ուշ՝ ԱՍԱԼԱ-ի գործունեության սկզբնական շրջանում ևս ցեղասպանության թեման շարունակում էր տաբու մնալ, սակայն աստիճանաբար սկսում է որոշակիորեն տեղ գրավել թուրքական հասարակական-քաղաքական քննարկումներում, ինչպես Հրանտ Դինքն է նկատել տալիս, քուրդ մտավորականների շնորհիվ, մասնավորապես Իսմայիլ Բեշիքչիի կողմից, ապա Ֆիքրեթ Բաշքայայի, Օսման Այթարի, հետո միայն թուրք այլախոհ մտավորականների կողմից այդպես խախտելով տաբուի հիմքերը:

Այսօր արդեն կարող ենք վստահաբար ասել, որ Հայոց ցեղասպանության թեմայի, ինչպես բան եզրույթի վրա եղած տաբուն որոշ չափով կոտրվել է Թուրքիայում, և դրանում կարևորագույն դեր ունի այլընտրանքային մամուլը՝ առաջին հերթին «Ակօս» շաբաթաթերթը և, ինչպես նշեցինք, այլախոհ մտավորականները, «Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումից» անջատ՝ հայերի հանդեպ վարած քաղաքականությունը որպես ցեղասպանություն ճանաչող մտավորականները սկսում են հարթակ որոնել բարձրաձայնելու ուղղությամբ:

Ահա շաբաթաթերթը հնարավորություն է տալիս ձևավորելու բազմակողմ հարթակ՝ կարծիքների արտահայտման, հայեցակետեր և տեսություններ առաջադրելու համար: Այս ճանապարհով «Ակօս»-ն առողջ բանավեճի ասպարեզ ապահովեց՝ գիտակցելով, որ «առաջին մտահոգությունը պետք է ըլլայ Թուրքիա հաւաքականութեան համար պատմութեան վերաբերյալ ազատ տեղեկութեան հոսք»:

Չափազանցված չի լինի, եթե ասենք, որ «Ակօս»-ի ամենամեծ առաքելությունը հենց այդ տաբուն կոտրելն էր, որը նա արեց հաջողությամբ: Շաբաթաթերթը խնդիր է դնում պետական թեզից տարբերվող տեսակետներին տեղ տալու ծրագրային ուղեգիծը՝ հստակ գիտակցելով, որ դա ընդունելի չի լինելու շատերի համար: Այս մասին թուրք պատմաբան Թաներ Աքչամը գրում է. «Կարգ մը նիւթեր կարգ մը անձերու կողմէ տարբեր ձեւերով կ'ընկալուին կամ կը մեկնաբանուին ու նոյնիսկ տարբեր կը պատմուին կամ կը բացատրուին: Նման նաեւ կարգ մը հարցեր, որոնք Թուրքիոյ մէջ բնաւ չեն պատմուած ու խօսուած: Ասոնք պէտք է պատմուին ու Թուրքիոյ մէջ մարդիկ պէտք է որ անհաճոյ բաներն ալ իմանան ու գիտնան: Շատ ցաւալի պատմութիւններ են պատահածները եւ որու կողմէ կամ ինչ պատճառով ալ կատարած ըլլայ, պատմութեան ընթացքին գործուած ամէն արարք բացէ ի բաց պէտք է ըսուի»:

«Ակօս»-ը վերլուծության սկզբունք է ընդունում այն, որ թուրք ժողովուրդը չգիտի իրականությունը, ուստի պաշտպանում է այն, ինչ իրեն է հայտնի: Սկսած 1915 թ.-ից մինչ օրս՝ թուրքական կրթական համակարգը, մամուլը, պաշտոնական քարոզչամեքենան լծված են հասարակությանն իրականությանը չհամապատասխանող, աղավաղված պատմություն պարտադրելու գործին: Ուստի շաբաթաթերթն իր էջերը տրամադրում է առողջ բանավեճի, հայ և օտարազգի հեղինակների տեսակետների քննարկումների համար՝ որպես սկզբունք ընդունելով «գիտականության բարոյականությունը»: Այս մասին Հրանտ Դինքը նկատել էր տալիս, որ մտավորականներ կան՝ չեն ընդունում Հայոց ցեղասպանությունը, սակայն սկսել են գոնե իրենց «խիղճը գործածել»:

Իրականությունն իր զանազան ոլորտներով մարտահրավեր է ինքնաարտահայտման ձգտող լեզվական գործիքի համար՝ ստանալով քաղաքական շահարկումի աստառ, հետևապես առանցքային պետք է դիտարկվի գիտականության բարոյականության մոտեցումը:

Շաբաթաթերթն այս հարցում առաջադրում է հետևյալ մոտեցումը. «Շատերը այն «կոտորած», շատերը «գենոցիդ», շատերը «տեղահանություն», շատերն էլ «ողբերգություն» են անվանում: Մեր նախնիներն էլ «Անատոլիայի խոսակցականով» «kiyim» (ջարդ) են ասում»:

ԳԼՈՒԽ 3 Բ.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Թուրքիայի կողմից շուրջ մեկ դար շարունակվում է Հայոց ցեղասպանության փաստի ժխտումը, որի «ակադեմիական» հենքն ապահովելու համար միտումնավոր շրջանցվում է արդարության, գիտական անաչառության ու անկողմնակալության սկզբունքը: Վերջին տասնամյակների ընթացքում Հայոց ցեղասպանության փաստը ժխտող մենագրությունների և հոդվածների պակաս չի նկատվել: Դրանցում ընդհանուր առմամբ զարգացվում են դեռևս կոտորածների ընթացքում շրջանառության մեջ դրված մի քանի թեզեր՝ փորձելով տարբեր «փաստարկներով» գիտական հանրությանը պարտադրել պատմության իրենց վարկածը: Այդ թեզերի ակունքները կարելի է գտնել Մեծ եղեռնի և դրան հաջորդած տարերին երևան եկած մի շարք հրատարակություններում, որոնցում փորձ էր արվում միջազգային հանրության ուշադրությունը շեղել իրադարձությունների ընթացքից, աղավաղել փաստերը կամ պարզունակ կերպով հերքել հայերի ոչնչացման գործում թուրքական պետության դերակատարությանն առնչվող ցանկացած մեղադրանք:

Դեռևս թուրքական հանրապետական պատմագրության սկզբնավորումից առաջ լույս են տեսել մի շարք գրքեր, որոնցում կեղծվում է պատմությունը, հենքվում հայերի ոչնչացման գործում թուրքերի դերակատարությունը: Դրանցից առաջինը և ամենակարևորը 1916 թ. Կ. Պոլսում լույս տեսած «Հայկական կոմիտեների նպատակները և հեղափոխական գործունեությունը» գիրքն է: Դրանով երիտթուրքերը ոչ միայն փորձում էին խուսափել Հայոց ցեղասպանության պատասխանատվությունից, այլև ամեն ինչում մեղադրել հայերին: Ընդհանուր առմամբ այս գրքում են առաջին անգամ գրավոր ձևակերպվել Հայոց ցեղասպանության ժխտման հիմնական թեզերը, որոնք հետագայում կրկնվել և զարգացվել են հանրապետական պատմագրության կողմից:

Ըստ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության նախկին նախագահ Գ. Ստենթոնի՝ ցեղասպանությունը մեկանգամյա գործողություն չէ, այլ շարունակական գործընթաց, որը բաղկացած է 8 փուլից՝ դասակարգում, սիմվոլացում (խորհրդանշում), դեհումանիզացիա (անմարդկայնացում), կազմակերպում, բևեռացում, նախապատրաստում, բնաջնջում և ժխտում: Ժխտումը ցեղասպանության 8-րդ փուլն է, որը «մշտապես հաջորդում է յուրաքանչյուր ցեղասպանություն»: Գիտնականների մի

ստվար զանգված կարծում է, որ հայտնի ցեղասպանությունների ծրագրված ժխտումը վտանգավոր գործողություն է և պետք է հավասարեցվի իրական ցեղասպանությանը ցուցաբերած անմիջական կամ ոչ անմիջական աջակցության հետ:

Թուրքական կառավարության ժխտողական քաղաքականությունը հանգեցնում է հայ ազգաբնակչության հանդեպ նոր բռնությունների: Ժխտողականության յուրաքանչյուր դրսևորում նպաստում է հայատյացության՝ որպես ռասիզմի արմատացմանը Թուրքիայում:

Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ իրականացվող հայկահայկական բողոքի ցույցերը Թուրքիայում և աշխարհի մյուս վայրերում ակնհայտորեն մատնանշում են հայերի դեմ առկա թշնամանքը: Ադրբեջանի կողմից հնարված այսպես կոչված Խոջալուի «ցեղասպանության» տարելիցի կապակցությամբ Թուրքիայում 2012 թ. փետրվարի 26-ին տեղի ունեցած ակցիաները հայատյացության հստակ դրսևորում էին: Պաստառներից շատերը հայերի դեմ բացահայտ բռնության կոչեր էին պարունակում. «Այսօր՝ Թաքսիմը, վաղը՝ Երևանը. մենք կհարձակվենք ձեր վար հանկարծակի, գիշերով», «Արարատը կդառնա ձեր գերեզմանը», «Դուք բոլորդ հայեր եք, բոլորդ վիժվածքներ եք» և այլն:

2012 թ. Ֆրանսիայի պառլամենտի կողմից Հայոց ցեղասպանությունը քրեականացնող օրինագծի ընդունումից հետո տարբեր երկրներում տեղի ունեցած բողոքի ակցիաները Թուրքիայի պատմության արյունալի էջերի հանդեպ հպարտության նոտաներ էին պարունակում, ինչը նույնպես ժխտողականության հերթական դրսևորումն էր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրությունում տեղի էր ունենում հայերի, որպես ներքին թշնամիների կերպարի ձևավորում, ինչը թույլ էր տալիս հրահրել մահմեդական բնակչությանը մասնակցելու հայերի բնաջնջման գործընթացին: Հին նախապաշարումներին՝ հայերը որպես «անհավատներ», «ստորադաս խավ» և «բռնության համար հնարավոր թիրախ», գումարվեցին նոր՝ հայերն իբրև «շահագործողներ», «թուրքական բնակչության համար մրցակիցներ» և

«ռուսների ու եվրոպացիների դաշնակիցներ» քարոզչական պիտակավորումներ: Բացի այդ առաջ քաշվեցին սպանությունն արդարացնելու մի շարք հայեցակարգեր, որոնցում կարևոր տեղ էր զբաղեցնում «Հայրենիքի փրկության գաղափարը»: Այն իր հերթին ուղեկցվում էր կայսրության հայ բնակչության ապամարդկայնացման քաղաքականությամբ: Բոլոր այդ գործընթացների միահյուսումը նպաստավոր միջավայր ստեղծեց օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանություն իրականացնելու համար:

Դարավոր կարծրատիպերն ուղեկցվում են զոհերի ապամարդկայնացման գործընթացը: Պրոֆ. Գրեգորի Սթենթոնը նկարագրել է «ապամարդկայնացման» գործընթացը որպես ցեղասպանության փուլերից մեկը: «Մեկ խումբը հերքում է մյուս խմբի մարդկային հատկանիշները: Այդ խմբի անդամները հավասարեցվում են կենդանիների, վնասատուների, միջատների և հիվանդությունների: Ապամարդկայնացումը հաղթահարում է մարդկային բնականոն զզվանքն ընդեմ սպանության»:

Ապամարդկայնացումից հետո զոհերն այլևս չէին ընկալվում որպես մարդկային էակներ: Մորգենթաուն նշում էր, որ տարածված եզրը, որ կիրառվում էր թուրքի կողմից քրիստոնյաի հասցեին, «շունն» էր, և նրա գնահատմամբ սա ոչ միայն հռետորական անվանում էր: Թուրքը փաստորեն քրիստոնյա դրացի ժողովուրդներին դիտարկում էր պակաս արժանի, քան իր ընտանի ընտանի կենդանիները: Ռուսական արքունի խորհրդական Ալ. Լևիցկին հաղորդում էր. «... մուսուլմանների ատելությունը նրանց (հայերի) հանդեպ չի դադարում, և ամեն առիթով «գյավուր» հայհոյանքի հետ մեկտեղ, այդ ատելության դրսևորումը, մանավանդ գյուղերում, երևում է այն խոսքերում, որ «սպիտակ թե սև շուն» - իրենց համար մեկ է, այսինքն՝ հույների թե հայերի, միևնույն քրիստոնյաներն են»:

Ցեղասպանության կազմակերպիչներից մեկը երիտթուրք բժիշկ, Դիարբեքիրի նահանգի վալի Մեհմեդ Ռեշիդը, հայտարարում էր. «Հայ դավաճանները գտել են իրենց տեղը հայրենիքի ծոցում: Նրանք վտանգավոր մանրէներ են»: Նման բժշկական եզրույթների օգտագործումը՝ որպես հայկական համայնքի համատարած ոչնչացման հիմնավորում, չափազանց տարածված էր: Ախտահանման և վիրաբուժական անդահատման հայեցակարգը որպես միջոցներ հասարակությանը հիվանդության բուժման համար օգտագործելն ապամարդկայնացման գործընթացի տրամաբանական մասն էր:

* * *

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրությունում ընթանում էին հասարակական գործընթացներ, որոնք թույլ տվեցին Հայոց ցեղասպանության ժամանակ զանգվածային մասնակցություն ապահովել: Ձևավորվում էր հայերի, որպես ներքին թշնամիների կերպարը, ինչը խրախուսում էր օսմանյան կայսրության շարքային մուսուլման բնակչին ներգրավվել բնաջնջելու գործընթաց: Հիմնվելով հին նախապաշարումների վրա՝ հայերը իբրև «անհավատներ», «ստորադասներ» և «հնարավոր զոհեր», տարածվում էին նաև նոր քարոզչական կերպարներ՝ հայերը որպես «հարստահարողներ», «մրցակիցներ» և օտարներին՝ «ռուսներին և եվրոպացիներին աջակցողներ»: Դրան գումարվում էր սպանությունների գործընթաց ներգրավվելը իբրև մեծ գաղափարի մաս և հայրենիքի փրկության անհրաժեշտություն ներկայացնելը, որը, ուղեկցվելով հայերի ապամարդկայնացումով, ավարտին էր հասցնում ցեղասպանական միջավայրի ձևավորումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայկ Դեմոյան «Ցեղասպանագիտական հանդես» 1-2 (2015) էջ 9:

Վիկտոր Նադեին-Ռաևսկի «Ցեղասպանագիտական հանդես» 1-2 (2015) էջ 23:

Գևորգ Վարդանյան «Ցեղասպանագիտական հանդես» 1 (2016) էջ 11:

Սուրեն Մանուկյան «Ցեղասպանագիտական հանդես» 1-2 (2015) էջ 42:

Նիկոլայ Հովհաննիսյան «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է» Երևան, 2012 էջ 122-123:

Գէորգ Խրլոպեան «Ցեղասպանագիտություն» Պէյրութ, 2006, էջ 104:

Մ. Արզումանյան «Հայաստան 1914-1917» Երևան, 1969, էջ 320:
Մելինե Անումյան «Ցեղասպանագիտական հանդես» 1-2 (2015) էջ 40:
Ռեգինա Գալուստյան «Ցեղասպանագիտական հանդես» 1 (2021) էջ 31-32:
Հասմիկ Գրիգորյան «Ցեղասպանագիտական հանդես» 1 (2019) էջ 16-17:
Գևորգ Վարդանյան «Ցեղասպանագիտական հանդես» 1 (2014) էջ 67, 76:
Էդիտա Գզոյան «Ցեղասպանագիտական հանդես» 1 (2014) էջ 122-123:
Էլինա Միրզոյան «Ցեղասպանագիտական հանդես» 1 (2016) էջ 96-98:
Սուրեն Մանուկյան «Ցեղասպանագիտական հանդես» 1-2 (2015) էջ 54-55: